



Խմբագրական

Տեղապտույտ, թե՛ իրական լավարկում

Պետական կառավարման համակարգում բարեփոխումներ իրականացնելու անհրաժեշտությունը վաղուց է ծանոցել մեր առջեւ:

Ներկա իշխանությունները, 2007թ. ստանձնելով պետական կառավարման համակարգի պատասխանատվությունը, փորձեցին բարեփոխումներ կատարել մեր կյանքի տարբեր ոլորտներում՝ նպատակ ունենալով Արցախի Հանրապետության եւ ժողովրդի համար ստեղծել բարեկեցիկ ու ապահով միջավայր:

Այդ միտումներով առաջնորդվելով՝ օրվա իշխանությունները չխնայեցին ջանք ու եռանդ, որի արդյունքում ունեցանք զգալի հաջողություններ: Հաջողություններն առաջին տարիների ակնհայտ էին: Դա գնահատվեց ինչպես ժողովրդի, այնպես էլ հասարակական ու քաղաքական կառույցների կողմից:

Հավատարիմ 2007թ. որդեգրած քաղաքականությանը՝ տարեցտարի նկատելի էր պետական միջոցների ուղղորդումը դեպի սոցիալական ոլորտ, գյուղի եւ գյուղատնտեսության նկատմամբ նոր քաղաքական գծի որդեգրմանը, տնտեսական համակարգում ճյուղային նոր ոլորտների կյանքի կոչելուն /հանքարդյունաբերություն, էներգետիկա, վերամշակում, թեթեւ արդյունաբերություն/:

Այս ամենով հանդերձ՝ չպետք է անտեսել, որ մեր հանրապետությունում ստեղծված ներկա վիճակը դարձել է մտահոգիչ՝ հասարակական լայն շերտերում առաջացնելով հուսահատության, հիասթափության եւ անվստահության մթնոլորտ: Դրա վկայությունն էր 2012 թ. Նախագահական ընտրությունների պատկերը:

Հունիսի 30-ին գումարված ԱԺ արտահերթ նիստում, պետական կառավարման համակարգի լավարկման նպատակով ԼՂՀ կառավարության կողմից ներկայացվել է օրենքի նախագիծ՝ կառավարության կազմում կառուցվածքային փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Դաշնակցությունը ողջունել է այսօր էլ գնահատելի է համարում անկա միտումները եւ ստեղծված կացության մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը: Սակայն անցած օրերին այդպես էլ լուրջ քննարկումների դաշտ չստեղծվեց այս օրինագիծը համոզիչ կերպով օրենքի վերածելու համար: Այդ պատճառով «Դաշնակցություն» խմբակցությունն առաջարկել է՝ ավելի խորը եւ համապարփակ վերլուծություններ անելու եւ հիմնավոր առաջարկ ներկայացնելու նպատակով հետաձգել սույն նախագծի ներկայացումն ԱԺ: Ներկայացված օրինագիծը կառավարության կողմից լիարժեք քննարկման չգրվեց: Իսկ փորձագիտական եզրակացության եւ հիմնավորումների մեջ չկային համոզիչ փաստարկներ եւ հաշվարկներ. ի՞նչ է այն տալու մեզ կառավարման համակարգում, ինչպիսի՞ ֆինանսական միջոցներ ենք խնայելու եւ ո՞ր ոլորտներում, ինչպիսի՞ գործընթացով է այս միտումները դառնալու իրականություն, ինչպե՞ս ենք մենք ժողովրդի մեջ առկա, բայց չբարձրաձայնվող անվստահության մթնոլորտը փարատելու: Եվ, ի վերջո, եթե մենք անցնող տարիներին ունենք 9-10 տոկոս տնտեսական աճ, այն էլ այնպիսի բարդ աշխարհաքաղաքական եւ տնտեսական իրավիճակում, երբ հարեան ոչ հարեան երկրներում ընդամենը 3-4 տոկոս տնտեսական աճ էր կամ նույնիսկ անկում, ինչու՞ է անհրաժեշտ դարձել կատարելու կառուցվածքային փոփոխություններ: Տեղապտույտ կլինի այդ ամենը, թե՛ իրական լավարկում, ցույց կտա ապագան:

Հուսանք, որ իրավիճակի խորը գիտակցումը եւ առաջացած հարցերի պատասխանները կհանգուցալուծվեն արդեն իսկ ընդունված օրենքի կիրարկման արդյունքում:



Կայացավ ԼՂՀ ԱԺ արտահերթ նիստը

Աշոտ Ղուլյանի նախագահությամբ հունիսի 30-ին տեղի է ունեցել ԼՂՀ 6-րդ գումարման Ազգային ժողովի արտահերթ նստաշրջանի լիազումար նիստը, որը հրավիրվել էր կառավարության նախաձեռնությամբ:

Առաջարկված օրակարգի համաձայն՝ խորհրդարանը քննարկել է ընդունել է հետևյալ օրենքները.

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքը, համաձայն որի՝ հստակեցվում են Շահումյանի շրջանի համայնքների եւ բնակավայրերի վարչական սահմանները:

«Պետական գույքի մասնավորեցման 2010-2012 թվականների ծրագրի կատարման 2014 թվականի տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին» օրենքը, որով շարունակվում է պետական գույքի մասնավորեցման գործընթացի օրենսդրական կարգավորումը:

«Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» եւ «Հանրային ծառայության մասին» ԼՂՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքների փաթեթը, որի համաձայն՝ սահմանվում են Ազգային ժողովի պատգամավորի եւ ԱԺ աշխատակազմի ղեկավարի տեղակալի վարձատրության պաշտոնային դրույքաչափի հաշվարկման գործակիցները:

«Առևտրի եւ ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքում լրացում կատարելու մասին» եւ «Առևտրի եւ ծառայությունների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու

մասին» օրենքների փաթեթը, որով անմիջական արտադրող կամ անմիջական ներմուծող չհանդիսացող՝ պարտադիր դրոշմավորման ենթակա ապրանքներ իրացնող կազմակերպություններին եւ անհատ ձեռնարկատերերին մինչեւ դրոշմավորման ենթակա ապրանքներն իրացնելու վերջնաժամկետը լրանալը թույլատրվում է դրոշմավորել իրենց մոտ առկա դրոշմավորման ենթակա ապրանքների մնացորդները:

«ԼՂՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որն արտակարգ իրավիճակների պետական ծառայությունում փրկարարական ծառայողների համար գործող տարիքային շեմը որոշակիորեն իջեցնում է:

«Պետական կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքը, որի համաձայն՝ անհատ ձեռնարկատեր լինելու ժամանակահատվածը հաշվառվում է աշխատանքային ստաժ, եթե անձը վճարել է եկամտային հարկ:

«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կառուցվածքի մասին» օրենքը, որով օպտիմալացվում է գործադիր մարմնի կառուցվածքը:

Ըստ այս նախագծի՝ ԼՂՀ նախարարությունների կառուցվածքը լինելու է այսպիսին՝ Աշխատանքի եւ սոցիալական հարցերի, Առողջապահության, Արդարադատության, Արտաքին գործերի, Էկոնոմիկայի, Ֆինանսների, Գյուղատնտեսության, Կրթության, Գիտության եւ սպորտի, Մշակույթի եւ երիտասարդության հարցերի, Պաշտպանության, Զաղաքաշինության նախարարություններ:

Հիմնական փոփոխությունները լինելու են ԼՂՀ կառավարության առընթեր

մարմիններում: Այսինքն՝ նախկին 9 մարմինների փոխարեն կգործեն 4-ը՝ Ոստիկանություն, Ազգային անվտանգության ծառայություն, Փրկարար ծառայություն, Շրջակա միջավայրի եւ բնական ռեսուրսների վարչություն:

Այնուհետեւ խորհրդարանի հաստատման է ներկայացվել ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը: Բացի կառավարության պաշտոնական լիազոր, ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարար Ս.Թեւոսյանի ներկայացրած հաշվետվությունից, հարակից գեկույցներով հանդես են եկել նաեւ Վերահսկիչ պալատի նախագահ Է.Ավանեսյանը, ԱԺ ֆինանսաբյուջետային եւ տնտեսական կառավարման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Ռ.Իսրայելյանը եւ պաշտպանության, անվտանգության եւ օրինապահպանության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Լ.Հովհաննիսյանը: Հաշվետվության վերաբերյալ իրենց տեսակետներն են հայտնել խմբակցությունների ներկայացուցիչները: Արդյունքում խորհրդարանը քվեարկեց ԼՂՀ 2014 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվությունը հաստատելու մասին ԱԺ որոշման օգտին:

Արտահերթ նստաշրջանի ավարտին խորհրդարանն ի գիտություն է ընդունել ԼՂՀ 2015 թվականի 1-ին եռամսյակի պետական բյուջեի կատարման ընթացքի վերաբերյալ տեղեկատվությունը (ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարար Ս.Թեւոսյան) եւ ԼՂՀ 2012-2014 թվականների պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագրի կատարման հաշվետվությունը (ազգային վիճակագրական ծառայության նախագահ Կ.Ներսիսյան):

Հայ դատի հանձնախումբը ԱՄՆ-ին կոչ է անում դատապարտել Ադրբեջանի ագրեսիայի ակտը

Հայ դատի ԱՄՆ հանձնախումբը կոչ է արել նախագահ Բարաք Օբամային՝ խախտել լռությունն ալիեյան ագրեսիայի նկատմամբ:

Հանձնախումբը նաեւ խստորեն քննադատել է Հայաստանի եւ Արցախի դեմ ուղղված հիւսիսային ատելությանը լցված հայտարարությունները եւ վերջերս ՀՀ նախիջեւանյան սահմանին հրադարձարի ռեժիմի խախտումը, որի հետեւանքով հայ զինվոր էր զոհվել:

«Փաստերն ավելի քան ակնառու են, ինչպես նաեւ Օբամայի վարչակազմի ապակառուցողական վարքագիծը, որով նա հրաժարվում է հակադրվել նախագահ Ալիեւի ագրեսիային: Հունիսի 25-ին Ալիեւը բացահայտ խոսեց Նախիջեւանի սահմանի հարձակման մասին՝ հայտարարելով, թե Հայաստանն ադրբեջանական տարածք է: Մեկ օր անց, արձագանք չստանալով միջազգային հանրության կողմից, նա իրագործեց իր սպառնալիքները, որի հետեւանքով զոհվեց Արման Եփրեմյանը»,- նշել է Հայ դատի ԱՄՆ հանձնախմ-

բի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

Նրա խոսքով՝ ԱՄՆ-ն եւ ԵԱՀԿ-ն ձա-



խողվել են ադրբեջանական ահազանցող ագրեսիային վճռական հակահարված տալու գործում:

Մինչ այդ ԱՄՆ Հայ դատի հանձ-

նախմբի նախագահ Զեն Խաչիկյանը ԱՄՆ Պետդեպին նախագգուշացրել էր Հայաստանի եւ Ղարաբաղի նկատմամբ



Ադրբեջանի նախագահի կողմից սադրանքներ վերսկսելու մասին:

Հունիսի 26-ին Պետդեպի ներկայացուցիչների հետ հանդիպման ժամա-

նակ Խաչիկյանը զգուշացրել է, որ մեծ է հավանականությունը, որ Ադրբեջանի նախագահ Իլիհամ Ալիեւը կվերսկսի Հայաստանի եւ Ղարաբաղի վրա հարձակումները Բաքվի Եվրոպական խաղերի փակումից հետո:

Ինչպես ասված է հայտարարության մեջ, հանդիպումից անմիջապես հետո հայտնի է դարձել, որ Ադրբեջանական կողմը ակտիվ կրակ է վարել ՀՀ Նախիջեւանյան սահմանի Սյունիքի մարզի Գորհայք բնակավայրի հայկական դիրքերի ուղղությամբ՝ կիրառելով նաեւ մեծ տրամաչափի զենքեր: Հայկական կողմի պատասխան կրակից հետո հակառակորդը կրել է բազմաթիվ կորուստներ, սակայն մարտի ընթացքում զոհվել է նաեւ ՀՀ ՉՈւ զինծառայող, շարքային պայմանագրային Արման Մայիսի Եփրեմյանը՝ ծնված 1987թ: Հատկանշական է, որ այդ հեռակետերի հատվածում վերջին մեկ տարում կրակահերթեր առհասարակ չէին եղել:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բաքվի հաշվեհարդարներն աննախադեպ են հետխորհրդային տարածքում. «The Guardian»

Ընթերցողի ուշադրության ենք ներկայացնում բրիտանական «The Guardian»-ի խմբագիրներ Մեյվ Շիրոյի եւ Չառլի Ջոնսի հոդվածը Բաքվում տեղի ունեցած Եվրոպական խաղերի շուրջ:

Ադրբեջանում անցկացված Եվրոպական խաղերն ի սկզբանե նշանավորվեցին վիճաբանություններով: Հարցեր ինչեցին այն մասին, թե արդյո՞ք մարդու իրավունքների ոլորտում այդքան վատ հեղինակություն ունեցող երկրում կարելի է միջազգային մարզական նման միջոցառում անցկացնել:

Խաղերի նախաշեմին նախագահ Իլիհամ Ալիեւի կառավարությունը հաշվեհարդար տեսավ այլախոհների հետ, արգելափակեց լրագրողների եւ ակտիվիստների գործունեությունը, եւ այս ամենն իրենց ծավալով նախադեպ չի ունեցել հետխորհրդային ամբողջ տարածքում, ինչպես կարծում է «Human Rights Watch» կազմակերպությունը:

Կիրակի տեղի ունեցած փակման արարողությունից հետո մարզիկների վերադարձի հետ մենք դիտում ենք խաղերի ժառանգությունը. մարզիկների ծախսերը ծածկելու համար վատնված

միլիոններից մինչեւ տասնյակ մարդիկ, ովքեր շարունակում են ճաղերի հետեւում մնալ իրենց քաղաքական գործունեության համար:



Բաքուի Եվրոպական առաջին խաղերի անցկացման միակ հավակնորդն էր:

Առաջին խաղերի ժամանակ, որոնց համար, որոշ գնահատականների համաձայն, 6.5 մլրդ ֆունտ սթեռլինգ է ծախսվել, Եվրոպական 50 երկրների 6

հազար մարզիկներ մասնակցեցին 20 սպորտաձեռում: Ավելի ուշ ադրբեջանական «Medyan TV»-ն ընդգծեց խաղերի բյուջեի եւ շինարարության ստվերում



բնակվող 5 անդամից բաղկացած ընտանիքի բյուջեի տարբերությունը, որը հազիվ ծայրը ծայրին է հասցնում՝ ամսական ստանալով 300 ադրբեջանական մանաթ (175 դոլար):

Ներկայում այստեղ շուրջ 100 քաղ-

բանտարկյալներ կան, որոնց առնվազն 20-ին «Amnesty International» իրավապաշտպան կազմակերպությունը որակում է որպես «խղճի բանտարկյալներ»: «Human Rights Watch»-ն էլ մատնանշում է միայն 2014 թվականին գրանցված 35 միջադեպի մասին, երբ իրավապաշտպանները, քաղաքական ակտիվիստներն ու լրագրողները ձերբակալվել են, քրեական հետապնդման ենթարկվել կամ բանտարկվել:

2015 թվականի Մամուլի ազատության համաշխարհային ինդեքսի համաձայն՝ աշխարհում 161 վայր կա, որտեղ լրագրող լինելն ավելի լավ է, քան Ադրբեջանում: «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը նշում է, որ Ադրբեջանում անկախ հեռուստակայաններ չկան, որ անկախ 4 լրատվամիջոցներից 2-ը 2015 թվականին փակվել են, իսկ մնացյալը «տնտեսական խեղդամահության» են ենթարկվում:

«Բաքու 2015»-ի ժամանակ գերմանացի մարզիկները հարցազրույց են տվել «Frankfurter Allgemeine» պարբերականին եւ պահանջել ազատ արձակել քաղաքականախաղերին:

news.am

ՄԱԿ-ը տազնապի է ենթարկել Ադրբեջանի իշխանությանը

Ադրբեջանի իշխանությունը խիստ անհանգստացած է այն բանով, որ ՄԱԿ-ի մարդու իրավունքների խորհրդում սեպտեմբերին անցկացվելիք նստաշրջանում հնարավոր է, որ քննարկման դրվի երկրում մարդու իրավունքների ոլորտում ողորմելի իրավիճակը, ինչն իր համար խիստ բացասական արդյունքների պատճառ կարող է լինել:

«Ազադլիգ»-ի հարդորմամբ՝ չնայած այն բանին, որ մոբիլիզացնելով իր բոլոր ջանքերը, իշխանությունը ցանկանում է այդ քննարկումներից դուրս գալ հաղթանակով, Եվրոպայի Խորհրդի

Խորհրդարանական Վեհաժողովում ունեցած պարտությունը նվազեցրել է դրա նկատմամբ նրա հավատը:

Եւ ԽԿ-ի վերջին նստաշրջանում 140 կողմ, 13 դեմ ձայներով Ադրբեջանի հետ կապված խիստ բանաձեւ է ընդունվել, որում պահանջ է դրվել բանտերից անհապաղ ազատ արձակել քաղաքական բանտարկյալներին: Դա գնահատվում է ժամանակ առ ժամանակ Եւ ԽԿ-ից, որպես խթանիչ միջոցից օգտվող ադրբեջանական իշխանության համար այդ կառույցի կորուստ:

Ըստ աղբյուրի՝ Ադրբեջանի իշխանու-

թյունը ՄԱԿ-ում անցկացվելիք քննարկումներից անհանգիստ է նաեւ այն բանի համար, որ այն համընկնում է երկրում խորհրդարանական ընտրություններին քիչ ժամանակ մնացած քաղաքական խանդավառության աճի շրջանի հետ: Թերթը գրում է, որ ընտրություններին քիչ մնացած մի ժամանակաշրջանում ՄԱԿ-ի պես հեղինակավոր կառույցի կողմից Ադրբեջանի հետ կապված խիստ բանաձեւի ընդունումը կարող է մահացու հարված լինել իշխանության համար:

«Ադրբեջանի իշխանության մեջ վս-

տահություն կա, որ ՄԱԿ-ում քննարկումները Եւ ԽԿ-ում տեղի ունեցածից ավելի խիստ են լինելու: Այդ պատճառով, միջազգային ճնշումները ավանդաբար շանտաժի մեթոդներով մեղմացնելուն ուղղված գործողությունների հետ, իշխանությունն այժմվանից բանակցություններ է անցկացնում լոբբիստական խմբերի հետ: Սակայն այդ ջանքերի ժամանակ պարզվել է, որ այլևս լոբբիստական խմբերը եւս ի գորու չեն օգնել Ադրբեջանի իշխանությանը, նշում է թերթը:

«ՍՊՍՈՍԺ»

Անհայտ կորած տղաների հասցեագիրը ազատագրված, անկախ Արցախն է

Հունիսի 29-ը ԼՂՀ-ում նշվում է որպես Անհայտ կորած ազատամարտիկների հիշատակի օր:

Այդ առիթով Ստեփանակերտի հուշահամալիրի անհայտ կորած ազատամարտիկների հուշակոթող են այցելել եւ հարգանքի տուրք մատուցել ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ վարչապետ Արա Յարությունյանը, ԱԺ նախագահ Աշոտ Ղուկասյանը, ԱԺ պատգամավորներ, ՀՀԴ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը, ԼՂՀ ՊԲ հրամանատար Լեւոն Մնացականյանը, պաշտոնատար անձինք, անհայտ կորած ազատամարտիկների հարազատներ:

Ելույթով հանդես է եկել ԼՂՀ պաշտպանության նախարար, Պաշտպանության բանակի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը եւ նշել.

«Ազգային-ազատագրական պայքարի անկաշկանդ ճանապարհը ստիպված էինք հաղթահարել զոհողությունների գնով: Արյուն են անկախության գինը: Մեր հայրենակիցներից շատերը նահատակվեցին համազգային իդժը իրականություն դարձնելու ճանապարհին: Այդ ուղին բռնաձեռքից շատերն էլ դարձան անհայտություն՝ կոչվելով հավերժի ճամփորդներ: Տղաներին պայքարի մղեց արցախցու արժանա-

պատվությունը: Մեր նպատակն է՝ այս օրը ավանդույթ դարձնել նոր սերնդի համար, որպեսզի նրանք շարունակեն խնկարկել մեր հերոսների հիշատակը»:

Ելույթով հանդես է եկել նաեւ ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարա-



զատների միության նախագահ Վերա Գրիգորյանը: Նա կոչ է արել միջազգային ատյաններին՝ հետեւողական լինել անհայտ կորած ազատամարտիկների վերադարձման հարցում:

«Մենք այսօր այստեղ չենք եկել սգալու: Եկել ենք՝ հերթական անգամ հակառակորդի եւ միջազգային ատյանների սրտի ու խղճի դուռը ծեծելու: Թող թշնամին իմանա, որ մեզ անընդհատ մերժելով՝ իր դեմքից չի մաքրի խայտառակ պարտու-

քեպիսկոպոս Մարտիրոսյանը նշել է.

«Ամեն մի ազատության համար այդպիսին է փրկագինը: Դա մեր լուծն է, մեր վճռագինն է: Անհայտ կորած տղաների հասցեագիրը ազատագրված, անկախ Արցախն է...»:

Այդ օրը, ջնայելով առողջական վիճակին ու տարիքին, հուշահամալիրի՝ անհայտ կորած ազատամարտիկների հուշակոթող է այցելել նաեւ Սեդա Սեւյանը, ով Մարտակերտի շրջանի հսկավան գյուղի բնակիչ է: Արցախյան պատերազմում Սեդայի ընտանիքից զոհվել են 15 հոգի, 5-ն էլ անհայտ կորել:

«Այս օրը այստեղ գալն ինձ համար դարձել է ավանդույթ, հուզմունքով ասում է Սեդա մայրիկը, իմ փոքր որդին էլ է անհայտ կորել, նրա վերադարձի սպասումն է ստիպում ինձ ապրել... Տան մի սենյակում կախված են բոլոր կորցրած հարազատներիս նկարները: Բայց այդ սենյակ համարյա չեմ մտնում, որովհետեւ ամենզ անգամ սիրտս ճմլվում է...»:

Միջոցառումը շարունակվել է ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միությանում, որտեղ կազմակերպվել է միության նախագահ Վերա Գրիգորյանի 2012-2014թթ. հուշամատյանի 3-րդ հատորի շնորհանդեսը:

Սեպ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Բիզնես-համաժողով Արցախում

Հունիսի 27-ին «Վալեքս գարդեն» ինյուրանցային համալիրի նիստերի դահլիճում տեղի է ունեցել Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից կազմակերպված բիզնես-համաժողովի հանդիսավոր բացումը, որին մասնակցել են գործարար աշխարհի ավելի քան 15 ընկերությունների ներկայացուցիչներ: Բիզնես-համաժողովի հանդիսավոր բացմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ԼՂՀ փոխվարչապետ Ա. Աղաբեկյանը եւ նշել, որ Արցախի գործադիրն արդեն հասել է այն մակարդակին, որ կարող է ավելի լայն հնարավորություններ ստեղծել ներդրողների համար, արտահայտված աջակցություն ցուցաբերել Արցախում գործարար ծրագրերի հեղինակներին: Փոխվարչապետը գործարար աշխարհի ներկայացուցիչներին վստահեցրել է, որ Արցախի բիզնես միջավայրն արդեն կայացած է, ինչպես նաեւ կայացած է գործարարների հետ տեղի իշխանությունների համագործակցության փորձը եւ, որ ամենակարեւորն է, շուկայական հարաբերություններում անխուսափելի ռիսկերը գործադիրի շնորհիվ բացառվում կամ նվազագույնի է հասցվում այդ հարաբերություններում:

Հանդես է ներդրողի համար: Համաժողովում աշխատանքը շարունակել է Բի Թու Բի հանդիպումներով: Այնուհետեւ տեղի են ունեցել քննարկումներ քաղաքաշինության, գյուղատնտեսության, առողջապահության, տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում առկա ձեռքբերումների ու հեռանկարների մասին: Ներկայացվել են տեղի գործարարների ու օտարերկրյա ընկերությունների աշխատանքները, տրվել են առաջարկներ Արցախի բիզնես ծրագրերի վերաբերյալ: Քննարկվել են համագործակցություն հաստատելու տարբերակներ:

արտադրություն եւ արտադրացային ընկերություններ, որոնք արտադրության ծավալների ավելացման մեծ պոտենցիալ են պարունակում, քանի որ այսօր օգտագործվում են առկա արտադրական հզորությունների 45-50 տոկոսը: 2014թ. վերամշակող կազմակերպությունների կողմից մթերվել է 2870.8 տոննա կաթ, ինչը գերազանցել է 2013թ. մակարդակն ավելի քան 30.6 տոկոսով: Բանջարեղենի մթերման ծավալը նախորդ տարվա համեմատությամբ ավելացել է 3.8 անգամ, իսկ պտղի մթերման ծավալը՝ շուրջ 3.0 անգամ:

րաժեշտ ծավալների ներգրավմանը եւ վերջինիս հիման վրա տնտեսական զարգացման ապահովմանը: Գրիգորի Մարտիրոսյանը կլոր սեղանի մասնակիցներին ներկայացրել է ԼՂՀ-ում գործող «Օտարերկրյա ներդրումների մասին» օրենքը, համաձայն որի՝ օտարերկրյա ներդրողներին տրվում են մի շարք երաշխիքներ (Օտարերկրյա ներդրողին եւ օտարերկրյա վարձու աշխատողներին իրավունք է տրվում եւ երաշխավորվում է ազատորեն արտահանել իրենց սեփականությունը, ներդրման հետեւանքով ստացած շահույթը (եկամուտը) եւ այլ միջոցները, որոնք օրինական կերպով ստացվել են որպես ներդրումների արդյունք կամ որպես աշխատանքի դիմաց վճար):



Գ. Մարտիրոսյանը ներկայացրել է 2014-ից մեկնարկված ԼՂՀ տնտեսվարող սուբյեկտների կողմից արտադրված արտադրանքի արտահանման աջակցության ծրագիրը եւ խոսել բարենպաստ ներդրումային միջավայրի ձեւավորման մասին:

Նշենք, որ անցած տարի կայացած համաժողովին մասնակցել են ընդամենը օտարերկրյա չորս ընկերությունների ներկայացուցիչներ: «Այս տարի քանիցս բազմապատկված այդ թիվը վկայում է, որ իսկապես Արցախի բիզնես միջավայրը կայացել է», - համոզմունք է հայտնել Հայաստանի առեւտրաարդյունաբերական պալատի նախագահ Անդրանիկ Ալեքսանյանը:

«Մննդամթերքի ոլորտի զարգացման հնարավորությունները եւ հեռանկարները» զեկույցով հանդես է եկել ԼՂՀ գյուղատնտեսության փոխնախարար Կարեն Աղաջանյանը, ով ներկայացրել է 2009-2014թթ. ագրոմշակվող արդյունաբերության հիմնական ցուցանիշները եւ նշել, որ հանրապետությունում այսօրվա դրությամբ գործում են գյուղատնտեսական հումք վերամշակող ավելի քան 3 տասնյակ կազմակերպություններ, այդ թվում՝ հատապտուղ, բանջարեղեն, խաղող, կաթ, միս վերամշակող, ինչպես նաեւ՝ բուսական յուղի

Հացի ու հացաբուլկեղենի պահանջարկը տեղական արտադրության հաշվին բավարարվում է ամբողջովին, իսկ ալյուրի արտադրությունը գերազանցում է տարեկան նվազագույն սպառման ծավալը 8.6 անգամ:

«Ինովացիաներ բարձր տեխնոլոգիաների ոլորտում» զեկույցով հանդես է եկել ԼՂՀ Արցախի ներդրումային հիմնադրամի տնօրեն Արտակ Միրզոյանը:

«Ներդրումների պետական աջակցությունը» զեկույցով հանդես է եկել ԼՂՀ ֆինանսների եւ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Գրիգորի Մարտիրոսյանը եւ նշել, որ ներդրումային քաղաքականությունը նպատակաուղղված է երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, ներդրումների անհ-

«Եվրասիական տնտեսական միության անդամ երկրների հետ ապրանքաշրջանառության զարգացման ծրագիրը» զեկույցով հանդես է եկել «Ինվենսենթ» ընկերության ներկայացուցիչը:

Բիզնես-համաժողովին ներկայացվել են նաեւ «Շինարարական համալիրի իրավիճակը, պետական գնումների կազմակերպման մեխանիզմները» եւ «Արցախի դեղագործական ոլորտի պահանջարկը» զեկույցները:

Միջոցառումն ավարտվել է Շուշի այցելությամբ, որտեղ օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչներին շնորհվել են վկայականներ բիզնես-համաժողովին մասնակցելու համար:

«ՄՊՈՍԻՃ»

Թուրքիայի հայերը որք չպիտի լինեն



Ստամբուլի Թուրքա թաղամասի Զամփ Արմեն անունը կրող հայկական որբանոցը հայ ժողովրդին վերադարձնելու պահանջով Ստամբուլի հայերի «Նոր Չարթունք» շարժումն արդեն 2 ամիս է, ինչ խոշոր բողոքի ակցիա է նախաձեռնել: Aparaj.am-ի թղթակիցը գրուցել է «Նոր Չարթունք» շարժման խոսնակ, բողոքի ակցիայի կազմակերպիչ, թուրքահայ Սայաթ Թեքիրի հետ:

- Արդեն 50 օրից ավելի է, ինչ Զամփ Արմեն ճամբարի տարածքում բողոքի ակցիա եք իրականացնում: Կպատմե՞ք ակցիայի մասին:

- Հայ բողոքական եկեղեցին գնել էր ճամբարը, բայց 1979թ. թուրքական կառավարությունը կալվածագիրը իլեց հայերից եւ 1983թ. ձրի տվեց ոմն թուրքի: Այսօրվա տերը ճամբարի 7-րդ տերն է: Այս տարի փյւման արտոնություն ստացան, եւ մենք գիտեինք, որ շենքը պիտի փլուզեն: «Նոր Չարթունք» շարժումը որոշեց, որ պետք է հայերինը լինի այդ ճամբարը: Դժբախտաբար, գործը մեզից առաջ ընկավ, եւ ճամբարի 1/3-ը քանդեցին: Գնալով ճամբար եւ կազմակերպելով ցույցեր՝ մենք արգելեցինք շենքի ամբողջությամբ քանդումը: Լրանում է արդեն դիմադրության 2-րդ ամիսը: Մենք դիմադրությունը կշարունակենք եւ կմնանք այնտեղ այնքան մինչեւ կալվածագրով Զամփ Արմեն ճամբարը մեզ վերադարձնեն: Այն Թուրքիայում ապրող հայերիս հիշողությունն է:

- «Արդարություն եւ զարգացում» կուսակցության պատգամավոր Մարգար Եսայանը խորհրդարանական ընտրություններից առաջ խոստացել էր, որ որբանոցի սեփականությունը կվերադարձվի հայկական կողմին: Այսօր այդ գործընթացը ի՞նչ փուլում է:

- «Արդարություն եւ զարգացում» կուսակցության անդամ Մարգար Եսայանը ընտրություններից առաջ խոստացել էր հետամուտ լինել ճամբարը հայերին վերադարձնելուն, բայց այդ խոստումը, պարզվում է, քվե շահելու համար էր միայն: Ժողովուրդը, սակայն, հավատաց այդ խոստումներին:

Մենք կազմակերպեցինք ցույցեր Ստամբուլի կենտրոնում, մամլո ասուլիսներ, բողոքներ պատրաստեցինք Զամփ Արմենի մասին: Արդյունքում՝ մամուլը եւ ժողովուրդը հետաքրքրվեց այս հարցով:

- Թուրքեր եւ քրդեր մասնակցում են

ցույցին:

- Անշուշտ: Մենք գիշեր ու ցերեկ մնում ենք ճամբարում: Մեզ միացան եւ՝ թուրքեր, եւ՝ քրդեր, մանավանդ Թուրքիայի շրջանի ժողովուրդը: Ցույցի առաջին օրերին մենք էլեկտրականություն չունեինք, եւ հարեւան Թուրքիայի շրջանի էլեկտրականության աշխատողների օգնությամբ հոսանքի գիծ քաշեցինք դեպի ճամբար: Գամբարի տարածքում կար նաեւ ավազան, որը նույնպես վերանորոգեցին թուրք աշխատողները:

Գամբարը սկսեց գործել՝ որպես ճամբար: Գամբարին կից շաբաթվա վերջին օրերին կազմակերպում ենք դասախոսություններ հայոց պատմության, գրականության մասին, սովորեցնում ենք այբուբենը, ֆիլմեր ենք ցուցադրում:

- Պատահականություն չէ՞, որ ճամբարի ապամոնտաժումը համընկավ 2015 թվականի հետ, երբ ավելի շատ են խոսում Ցեղասպանության հետեւանքների մասին:

- Գամբարի քանդումը կապ չունի Ցեղասպանության 100-րդ տարելիցի հետ: Թուրքիայի պետությունը ցեղասպանությունը մերժում է, եւ, բնականաբար, այսպիսի իրադարձություն չէր ուզում: Թուրքիան ապուշ երկիր չէ. ճամբարի քանդումը սպիտակ ցեղասպանություն է: Այն ցեղասպանության շարունակությունն է, ուղղակի ճամբարի տերն է որոշել հողատարածքը տուն շինելու համար օգտագործել: Բայց լավ է, որ 2015-ին եղավ այս ամենը, որովհետեւ այսպես մենք մեր ձայնը ավելի շատ կարողացանք տարածել:

- Ձեր կարծիքով՝ ճամբարի քանդումը հայերին էթնոկրոնական գտման ենթարկելու միջոց է:

- 70-ականներին կալվածագիրը մեր ձեռքից վերցրեցին եւ մեր ինքնությունն էլ հետը: Մենք ճամբարի կարիքը ունենք:

- Թուրքիայի իշխանությունները սպառնալիք չեն՞ կիրառում:

- Մենք մեր անվտանգությունը պահում ենք, միշտ զգոն ենք: Բայց մեզ ճնշել չեն կարող, որովհետեւ Թուրքիայի համար դա կլինի խայտառակություն:

- Ի՞նչ եք կարծում՝ պետությունը ճամբարը կվերադարձնի հայերին:

- Ես պետությանը վստահող մարդ չեմ, որովհետեւ՝ եթե ուզեին, ապա վաղուց լուծած կլինեին այս հարցը: Բայց, հուսամ, ամեն ինչ լավ կլինի:

- Դուք հայտարարությամբ եք հանդես եկել եւ կոչ արել հայությանը՝ միանալ ձեզ: Ի՞նչ ակնկալիքներ ունեք:

- Թուրքիայի այդ շրջանում գտնվում են մեծաքանակությամբ առանձնատներ, եւ այդ տարածքում ճամբարի գտնվելը խանգարում է: Զամփ Արմեն ճամբարի քանդումը կապված է դրամի հետ, բայց մենք այս հողամասը գնել ենք 1963թ. եւ ոչ մի դեպքում գումար չենք վճարելու: Մեր ձեռքից ճամբարը խլողները պետք է գնեն տիրոջից եւ վերադարձնեն մեզ:

Կոչ արեցինք նրա համար, որ ասենք՝ այո՞, մենք հիմա որբանոցը պաշտպանում ենք, բայց մենք որք ենք... Այդպես չպիտի լինի: Թուրքիայի հայերը որք

չպիտի լինեն...

Մենք ցանկություն ունենք, որ հայերիտասարդները գան Զամփ Արմեն ճամբար եւ միավորենք մեր ուժերը:

- Հետաքրքիր է՝ ի՞նչ վիճակում է այսօր գտնվում Թուրքիայի հայ համայնքը:

- Թուրքիայի հայ համայնքը կազմում է 40.000 մարդ: Կան, անշուշտ, նաեւ գաղտնի ապրող հայեր, իսլամացած հայեր, որոնց թիվը չգիտենք: Թուրքիայում հայերից շատերը ծուլվեցին: 40.000-ն էլ իր ինքնությունով, իր կրոնով, հավատքով մնաց հայ: Ամենավատն այն է, որ լեզուն է ծուլվում, արեւմտահայերենը վերանում է: Այսօր Թուրքիայում ապրող հայերը նման են «թուրքացած քրիստոնյաների»:

Ունենք 12 հայկական դպրոցներ եւ մեկ հայկական համալսարան, բայց դիպլոմը օրինական չէ, նույնիսկ Թուրքիայում չի անցնում այդ դիպլոմը:

Հայկական դպրոցներում սովորում է 3000 հայ աշակերտ, բայց հայերից շատերը սովորում են պետական դպրոցներում կամ Ամերիկյան, Ֆրանսիական

չացնում է նաեւ հակաճնշում:

Հասարակության մեջ լուրջ խնդիրներ չկան, բայց կան ազգայնամուլ, ֆաշիստ խմբեր, որոնք թիրախ են ընտրում հայերին: Օրինակ՝ Հրանտ Դինքի սպանությունը, որը Թուրքիայի մեջ շատ մեծ ալիք է բարձրացրել: Դատապարտվել է միայն մեկ հոգի, բայց ոճրագործությունը կազմակերպող խումբն ազատ է: Կամ՝ 2011թ. ապրիլի 24-ի դեպքը, երբ ծառայողական գործատու սպանել են հայազգի զինվոր Սեւակ Շահին Բալըքչին, եւ ոճրագործը նույնպես դատապարտված չէ: Թուրքիան առանց պատերազմի հող չի տալու հայերիս: Մենք էլ, ռեալիստ լինելով, պետք է հասկանանք, որ Թուրքիայի համար անգամ ցեղասպանությունն ընդունելը շատ մեծ հարց է, եւ ես այս հարցի առումով լավատեսորեն չեմ տրամադրված: Այստեղ հարցը միայն հողերի հատուցման հարցը չէ: Հարցը ինքնության հարցն է: Թուրքիայի Հանրապետությունը կառուցված է հայ ժողովրդի հիմքի վրա, հայերի կապիտալի հիմքով:



համալսարաններում:

- Աշխատանքի տեղավորվելու հարցում խնդիրներ լինում՞ են:

- Տեղեր կան, որ՝ այո, հայերին չեն վերցնում աշխատանքի: Բայց կան նաեւ ընկերություններ եւ կազմակերպություններ, որոնք չեն կարելուում ազգությունը: Նրանք կարելուում են աշխատանքի որակը: Բայց հայերին պետական համակարգում, հատկապես ոստիկանությունում չես կարող տեսնել: Թուրքիայի օրենքներում խտրականություն չկա, բայց մարդիկ ենթազգիտակցաբար խտրականություն են դնում:

- Ինչպե՞ս են այսօր թուրքերը վերաբերում հայերին:

- Հայոց ցեղասպանությունը մեծ ոճրագործություն էր, բայց ցեղասպանությունը շարունակվում է նաեւ այսօր: Այստեղ փոքր ազգերի նկատմամբ դեռ շարունակվում են ոճրագործությունները եւ մեր մեջ վախ են առաջացնում, նորից հիշեցնում մեր ազգին պատճառած տառապանքները: Ցավալին այն է, որ այս վախի մթնոլորտը փոխանցվում է սերնդեսերունդ: Սակայն նոր սերունդը վախկոտ չէ. պահանջում է իր իրավունքները: Բայց այդ վախը եւ ճնշողական մթնոլորտը նպաստում է նաեւ ինքնության պահպանմանը եւ առա-

- Վերջին խորհրդարանական ընտրություններում ընտրվել են 3 հայ պատգամավորներ: Թուրքիայի հայ համայնքը ի՞նչ ակնկալիքներ ունի հայ պատգամավորներից:

- Ակնկալիքներ ունենք այն առումով, որ խորհրդարանում կան 3 հայ պատգամավոր, եւ նրանք կներկայացնեն հայ համայնքի խնդիրները: Նշեմ նաեւ, որ 3 հայ պատգամավորները տարբեր կուսակցությունների անդամներ են, եւ միայն այդ 3 հոգին չեն, որ կուսակցական ցանկերում հայ էին: Դա մեզ համար մեծ նշանակություն ունի: Դրանով հարթվում է հայի ու թուրքի միջեւ եղած խտրականությունը:

Հարցին մյուս կողմից նայելով՝ ակնկալիքներ չունենք, որովհետեւ 500 մանդատ ունեցող խորհրդարանում 3 մանդատը ոչինչ է: Ուրիշ գաղափարներ ունեցող պատգամավորները, անշուշտ, չեն կարողանալու հարցեր լուծել:

Կարելուորը 3 պատգամավորը չէ, կարելուորը թուրք ժողովրդի հասկացողությունն է: Եթե ժողովուրդը ունենա հասկացողություն, ապա ցեղասպանության հարցն էլ կլուծվի:

Հարցազրույցը Լուսինե ԹԵՎՈՅԱՆԻ

Ջամայան ընտանիքը Արցախյան պատերազմում ունեցել է 2 զոհ եւ 2 վիրավոր

Արցախյան պատերազմում նշանակալից ներդրում են ունեցել Գիշի համայնքի տղաները: 1989-ին Գիշիում կազմավորել է կամավորական ջոկատ, որը մասնակցել է Գիշի եւ Մուշկապատի սահմանամերձ տարածքների ինքնապաշտպանական գործողություններին, հետագայում՝ միացել Մարտունու եւ հարակից տարածքների ինքնապաշտպանական մարտերին:

Արցախյան ազատամարտի մասնակից, 2-րդ կարգի հաշմանդամ Հայկազ Ջամայանն ընտանիքով ապրում է Գիշիում: Ծնվել է 1969 թվականին: Սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում եւ ավարտելուց հետո ընդունվել Մարտունու պոլիտեխնիկական ուսումնարան: Ծառայել է Ղազախստանում: Բանակն ավարտելուց հետո վերադարձել է հայրենի գյուղ, միացել արդեն կազմավորվող կամավորական ջոկատին:

Արցախյան պատերազմը Ջամայան ընտանիքի վրա թողել է մեծ վերքեր: Հայկազի փոքր եղբայրը, ով 18 տարեկան էր, եւ եղբորորդին, որն ընտանիքի անդրանիկ որդին էր, զոհվել են: Չոհվել է նաեւ քրոջ ամուսինը: Իսկ Հայկազի մայրը փեսայի մահից հետո տեղափոխվել է աղջկա մոտ՝ օգնելու մեծացնել երկու որդիներին: Վիրավորվել է նաեւ մեծ եղբայրը: Ինքը՝ Հայկազը, վիրավորվել է պատերազմն ավարտվելուց հետո, 1995թ. հունվարի 29-ին՝ ականի պայթյունի պատճառով: Ունի 2-րդ կարգի հաշմանդամություն:

Հայկազի կինը՝ Կարինեն, պատմում է, որ չնայած պատերազմին՝ 1991-ին ամուսնացել են, հարսանիք են արել, բայց, ցավոք, հարսանիքից նկար չունեն, որովհետեւ գյուղի միակ մարդը, ով լուսանկարչական սարք ուներ՝ Դադա Դադայանը, զոհվել է, իսկ նրա նկարած

նկարները կորել են:

Հայկազը եւ Կարինեն 4 զավակ ունեն 2 տղա, 2 աղջիկ:

«Պատերազմի տարիներին, - պատմում է Կարինեն, - շատ դժվարությամբ ենք մեծացրել երեխաներին: Տուն չունենալու պատճառով էլ մի քանի անգամ տեղափոխվել ենք»:

«Վիրավորվելուց հետո, սակայն, Հայ-



կազը պարապ չի նստել, - հպարտությամբ շարունակում է կինը, - իր համար հարմար գործ է գտել, որով մինչեւ այսօր զբաղվում է: Նա թոնիրներ է պատրաստում ինչպես համազյուղացիների, այնպես էլ տարբեր գյուղերի բնակիչների համար»:

Ինչպես գյուղացիներն են ասում՝ նրա ձեռքով ամեն ինչ գալիս է, ուղղակի առողջական վիճակը թույլ չի տալիս շատ ծանրաբեռնվել:

Տան տարածքում ունեն փոքր հողատարածք, որը ամուսիններն օգտագործում են որպես բանջարանոց: Անցած տա-

րիներին աճեցնում էին սածիլներ եւ վաճառում, իսկ այսօր, ինչպես նրանք են ասում՝ գյուղում չես կարող ոչինչ վաճառել «Հարեւանիս ինչպե՞ս կարող եմ փողով սածիլ տալ, ամոթ է», - ժպտալով ասում է Կարինեն:

Հայկազն ու Կարինեն 12 տարի առաջ գյուղում տուն են գնել, սակայն դեռ տան գումարն ամբողջությամբ չեն վճարել

տանտիրոջը: Հնարավորությունները չեն ներում:

Ջամայանների որդիները ծառայությունն ավարտելուց հետո մեկնել են Ռուսաստան՝ աշխատելու:

«Մեծ տղաս ամուսնացավ, սակայն աշխատանք չունենալու պատճառով մեկնեց Ռուսաստան: Այսօր կինն ու երեխան երեւանում են ապրում՝ կնոջ պապական տանը: Տղաս այդպես էլ չհասցրեց երեխային տեսնել: Մի կերպ գումար է վատակում եւ ուղարկում ընտանիքին», - հուզվում է Կարինեն:

«Փոքր տղաս էլ Ռուսաստանում է ամուսնացել: Կինը, բնականաբար, ազգությամբ հայ է, - շարունակում է Հայկազը, - հնարավորություն չունեն մեզ օգնելու. ամեն մեկն իր ընտանիքի հոգան է քաշում: Մենք էլ չենք պահանջում»:

Մեծ աղջիկը սովորում է Արցախի պետական համալսարանի հեռակա բաժնում եւ միաժամանակ աշխատում «Ղարաբաղ Կարպետ» Ստեփանակերտի ընկերության գործարանում: Կարինեն ասում է, որ աղջկա՝ քաղաքում մնալն ավելորդ ծախս է, այդ իսկ պատճառով ընտանիքը խնդրել է «Ղարաբաղ Կարպետ»-ի տնօրինությանը՝ դազգահ տրամադրել, որպեսզի աղջիկը հնարավորություն ունենա տանն աշխատելու:

«Եթե տնօրինությունը թույլատրի եւ դազգահ ունենանք տանը, աղջիկս ինձ էլ կսովորեցնի գորգ գործել, որպեսզի ես էլ կարողանամ աշխատել», - ասում է Կարինեն:

«Աշխատանքն ամենազեղեցիկ բանն է: Գյուղացին պետք է աշխատող լինի: Դրա համար էլ, անկախ իմ հաշմանդամությունից, ես չեմ կարող պարապ նստել: Օրս սկսվում եւ վերջանում է աշխատանքով», - ժպտալով ասում է Հայկազը:

Հ.Գ. - Ջամայանների ընտանիքի պատմությունը ընթերցելով Aparaj.am կայքում՝ «Ղարաբաղ Կարպետ» ընկերությունը արձագանքել է ընտանիքի խնդրանքին՝ տրամադրելով դազգահ:

Սիյունքահայ, ՀՀԴ անդամ Ջորջ Մահրուկյանը ընտանիքին ուղարկել է նյութական օգնություն, որն էլ նույն օրը փոխանցել ենք Ջամայաններին:

L. Թ

Դպրոցն ունի 6 աշակերտ, 6-ն էլ՝ նույն ընտանիքից



Մարտակերտի շրջանի Վարդաձոր համայնքի դպրոցը բառիս բուն իմաստով պահում են դպրոցի 6 աշակերտները, որոնք բոլորն էլ նույն ընտանիքից են: Դանիելյանների ընտանիքը գյուղի միակ բազմազավակ ընտանիքն է: Ամուսինները՝ Վեներան եւ Արան, հպարտությամբ նշում են, որ իրենց երեխաները մեծ գործ են անում դպրոցի համար: Եթե վաղը կամ մյուս օրը երեխաները դպրոցն ավարտեն, ապա հազիվ թե դպրոցը գոյատևի, քանզի գյուղում շատ հազվադեպ են ծնունդներ լինում: Դպրո-

ցի տնօրեն Անժելա Սավադյանը մեզ հետ ունեցած զրույցի ժամանակ ասաց, որ գալիք ուսումնական տարում կունենան մեկ նոր աշակերտ, հաջորդ տարի՝ դարձյալ մեկը, եւ դրանով կավարտվի սերնդափոխությունը: Դպրոցն 9-ամյա է, հանդիսանում է ճանկաթաղի դպրոցի մասնաճյուղը: «Դպրոցը, հավանաբար, կփակեն, - ասում է տնօրենը եւ ցավով ավելացնում, - այն կրում է Արցախյան պատերազմի առաջամարտիկ, հրամանատար Նորայր Դանիելյանի անունը, եւ ցավալի է, որ այն կդադարի՝ որպես դպրոց գոյություն ունենալ: Բացի այդ, դպրոցն ունի 9 ուսուցիչ, ովքեր կզրկվեն աշխատանքից: Դրսում 20-ից ավելի աշակերտներ ունենք, ովքեր տեղափոխվել են ճանկաթաղ, Հոռաթաղ, Մարտակերտ»:

Դանիելյան ամուսինները մեզ հետ կիսվեցին նաեւ իրենց հոգսերով: Ամուսինները չեն աշխատում. կինը երեխաներին է խնամում, տան հոգսերով զբաղվում, իսկ ամուսինը ավտոմեքսի եւ թարկվելուց հետո ունի առողջական խնդիրներ, եւ, ինչպես ինքն է ասում, դժվարանում է աշխատել: Ապրում են երե-

խաներին տրամադրվող պետական 50.000 դրամ նպաստով: «Գյուղի խառնուրդի պարտքով սննդամթերք ենք վերցնում, հետո, երբ նպաստը ստանում ենք, վերադարձնում ենք պարտքը: Պատահում է՝ չենք հասցնում ժամանակին վերադարձնել: Սննդամթերքի հոգսը մի կերպ հասցնելով՝ մնացած հոգսերը մնում են: Երեխաները դպրոցական են: Նրանց հագուստ ու կոշիկ է պետք. նրանք էլ են ուզում լավ շոր ունենալ, նորմալ կոշիկ հագնել, բայց մեր ուժերով չենք հասցնում: Եթե ինչ-որ մեկն օգնեց՝ օգնեց, եթե ոչ՝ մենք էլ ենք ցավ գգում, որ չենք կարողանում երեխաների ցանկությունները կատարել», - ասում է Վեներան:

Երեխաները, մոր վկայմամբ, անչափ աշխատասեր են: Անտառ են գնում՝ ցախ հավաքում, պոպոկ հավաքում, գնորդ լինելու դեպքում՝ վաճառում:

Հարցնում ենք՝ հողամաս չե՞ք մշակում, պատասխանում են, որ գյուղն ունի ջրի խնդիր: Մշտական ջուրը գյուղում բացակայում է, մեկ-երկու ժամով են միացնում: «Շատ կուզեի մեր տնամերձ հողը մշակել, բանջարանոց ստեղծել, հողից մի օգուտ ստանալ, բայց ջրի հարցը դժվար է: Եթե որեւէ մեկի հովանավորությամբ կարողանայի ձեռք բերել 300 մետր երկարությամբ խողովակ, ապա հարցը մասամբ կլուծվեր. ջուր կքաշեինք եւ երեխաների հետ կաշխատեինք հողամասում», - ասում է Վեներան:

Պետական հովանավորությամբ նրանց համար բնակելի տուն է կառուցվել, սակայն, ինչպես ամուսիններն են ասում, խոնավության հոտից շնչահեղձ են լինում: Խոնավ ու բորբոսնած պատերի ներքո մեծացող երեխաները համարյա միշտ հիվանդ են լինում, դպրոցից հաճախ են բացակայում:


«Ունենք մեկ կով եւ մեկ խոզ: Խոզը պահում ենք, որպեսզի Նոր տարուն մորթենք ու վաճառենք: Դա էլ մեծ օգուտ է մեզ համար», - ասում է Վեներան:

Աղջիկներից մեկը առողջական խնդիրներ ունի՝ ձեռքին ուռուցք է գոյացել: Վեներան ասում է, որ մեկ անգամ արդեն վիրահատել են, բայց ավելի է բարդացել: Չրույցի ժամանակ նա մեզ խնդրեց, որ եթե իմանանք, որ արտասահմանից համապատասխան բժիշկներ են եկել Ստեփանակերտ, իրեն տեղյակ պահենք, որպեսզի աղջկան բերի ստուգման:

Ինչո՞վ եք զբաղվում՝ հարցնում ենք երեխաներին: «Միասին խաղում ենք, մայրիկին ենք օգնում, անտառ ենք գնում, միրգ ու ցախ հավաքում», - ասում են, իսկ աղջիկներից ամենաավագն ասում է, որ շատ է ուզում ուսումը շարունակել: Հարցնում ենք՝ ի՞նչ ես ուզում դառնալ: Պատասխանում է. «Բժիշկ եմ ուզում դառնալ, ռազմական բժիշկ, որ զինվորներին բժշկեմ: Ուզում եմ, որ ոչ մի զինվոր չհիվանդանա...»:

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Արցախում առաջին անգամ կազմակերպվեց թթի փառատոն



Հունիսի 28-ին Արցախի Ամարաս վանքի հարակից թթի այգում տեղի ունեցավ թթի փառատոն: Փառատոնի նախաձեռնությունը ԼՂՀ ԿԱ զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պաշտպանության վարչությանն էր: Միջոցառմանը ներկա էին ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի թեմի առաջնորդ Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանը, ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Ղուլյանը,

ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, ԱԺ պատգամավորներ, պաշտոնատար այրեր, հյուրեր: Փառատոնին ներկա էր ԱՄՆ Գլենդել քաղաքի քաղաքապետ Արա Նաշարյանն իր ընտանիքի հետ: Փառատոնի հանդիսավոր բացումից հետո կայացավ թթաթափ եւ թթօրհնեքի արարողություն: Միջոցառման շրջանակներում կազմակերպվեց թթի բարիքների տոնավա-

ճառ, որին առանձին տաղավարներով իրենց մասնակցությունը բերեցին ԼՂՀ շրջանների բնակիչները: Տաղավարներում ներկայացված էին նաեւ արցախյան գորգարվեստի ու ձեռքի աշխատանքներ: Միջոցառումը հազեցած էր ժամանակային ու մշակութային ծրագրերով: Ծրագրում ընդգրկված էր նաեւ «Թթենուց մինչեւ մետաքս» խորագրով ցուցահանդես:

Ներկաներն առիթ ունեցան ծանոթանալու թթի թորման եւ դրշաբի պատրաստման եղանակներին: ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանը կարեւոր է համարել նման միջոցառման անցկացումը՝ ընդգծելով, որ թթենին Արցախի խորհրդանիշներից մեկն է: Նա հույս է հայտնել, որ թթի փառատոներն Արցախում կկրեն շարունակական բնույթ:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ



Կյանքը լուսամփոփի պես բան է. Դավիթ Ամայան



6-րդ դասարանում՝ Պ. Դուրյանի «Լճակ» բանաստեղծության հիմքի վրա: Երգերիս մեծ մասը, սակայն, գրել եմ պատերազմից հետո: Առաջին լուրջ ստեղծագործությունս 1994 թվականին եմ գրել՝ Արման Չոհրաբյանի (Ցուլ) հիշատակին նվիրված, որի խոսքերի հեղինակն է Ցուլի մայրը: - Ռազմից առաջ երգում էիք զինվորների համար, թե՞ ժամանակ չկար երգելու: - Պատերազմի տարիներին բոլորս էինք երգում՝ խմբովի: - Գիտե՞ք, որ դուք Ձեր մասնակցությունն եք բերել Արցախյան պատերազմին: Եթե չեմ սխալվում՝ 1992-ից մասնակցել եք մարտական գործողություններին: - Պատերազմի տարիներին ես ձեռք եմ բերել կենսագրություն, որի համար չեմ փոշմանում: Սակայն իմ ամենամեծ դժբախտությունը եղավ ընկերներիս կորուստը, եւ ես երգերիս միջոցով փորձում եմ արտահայտել իմ վիշտն ու ցավը: - Ինչի՞ց եք վախենում: - Կյանքում պատերազմից ավելի շատ վախենում եմ փառքից: Երգերս, որոնք գրել եմ իմ ընկերների համար, պետք չեն նրանց, նրանք այսօր չկան, իսկ ես երգելով՝ ստանում եմ ծափահարություններ... Տա Աստված, որ մի օր հանդիպեմ իմ հեռացած ընկերներին, բայց չգիտեմ՝ երես կունենա՞մ նրանց

աչքերին նայելու... - Ինչու՞ Ձեր երգերը հիմնականում տխուր են: Ի՞նչ թախծ է տիրում Ձեր հոգում: - Այս հարցի պատասխանը ես ինքս չգիտեմ, գու՞ցե երբ գտնեմ՝ սկսեմ ուրախ երգեր գրել... Բայց ես ինձ մեղանկալի չեմ համարում, սենտիմենտալ՝ առավել եւս: Ես կենսախիստ մարդ եմ, հումոր էլ ունեմ: - Ո՞րն է Ձեզ համար հրաշքը: - Կյանքը, այն, որ կանք՝ նույնիսկ կյանքի բոլոր բացասական կողմերով: Ծիշտ է, լինում են պահեր, երբ մարդն իր կյանքն ավարտված է համարում, որոշ մարդկանց մոտ դեպրեսիան հասցնում է նույնիսկ ինքնասպանության, բայց ես այդպիսին չեմ: Ես շատ դաժան անցյալ եմ ունեցել՝ ծողողներիս ու ընկերներիս կորցնելու պատճառով, սակայն ես մռայլ չեմ ապրել: Կյանքը լուսամփոփի պես բան է, պետք է ապրել այն հույսով, որ այդ լույսը մի օր էլ քեզ համար է բացվելու... - Կա՞ մի բանաձեւ, որով առաջնորդվում եք կյանքում: - Իմ կյանքի բանաձեւը ճշմարիտ լինելն է: Եթե ինքը քեզ չխաբես, ապա մյուսներին էլ, բնականաբար, չես խաբելու: Խաբվելուց չեմ վախենում, որովհետեւ խաբվում եմ այն մարդիկ, ովքեր խաբել չգիտեն, այսինքն՝ հավատալը բնորոշ է ուժեղ մարդուն, իսկ խաբելը՝ թույլ: - Պատերազմը Ձեր սերնդի վրա մեծ հետք է թողել: Դուք կռվում էիք մեկ գաղափարի համար, գիտակցում էիք, որ կարող եք Ձեր կյանքը կորցնել: Ինչու՞ այսօր

այդ նույն սերունդը հոգեբանորեն այս-բան ճնշված է: - Ուրիշ ձեւ լինել չէր կարող... Սիրելու համար որեւէ գաղափարախոսություն պետք չէ: Հայրենիքը սեր է, որը փոխանցվում է գիտակցությամբ, եւ այստեղ ավելորդ փիլիսոփայություն պետք չէ: Եթե մենք չունենայինք ավելորդ գաղափարախոսություններ, ավելի միասնական կլինեինք, իսկ եթե միասնական լինե՞նք՝ կլինե՞նք ավելի ուժեղ: - Դուք հաճախ եք լինում զորամասերում: Այսօրվա սերունդը, ըստ Ձեզ, որքանո՞վ է կրում այն ոգին, որն ունեիք դուք ու ձեր սերնդակիցները: - Իմ կարծիքով՝ այսօրվա սերունդը իմ սերնդից ավելի ուժեղ ոգի ունի: Նրանք շարունակում են մեր գործը եւ կրում այդ պատասխանատվությունը: - Ի՞նչ կփոխեիք այսօրվա մեր բանակում: - Կուզեի, որ բանակն ավելի անկեղծ լիներ: Զինվորին հրամայելու համար նրան պետք է տալ սեր եւ մի քիչ ազատություն: Սակայն այսօր մեր բանակում տիրում է համատարած խռովք՝ զինվորը սպայի նկատմամբ, սպան զինվորի նկատմամբ: Դիրքային զորամասերում այդ խնդիրը բացակայում է, որովհետեւ այնտեղ վտանգ կա, իսկ վտանգը հային միասնական է դարձնում: Միասնությունից վախենում են մեր թշնամիները: Բանակը պետք է դառնա մարդ դառնալու ամենաբարձր ինստիտուտը:

Հարցազրույցը վարեց Լուսինե Թեւոսյանը